

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ 5)

Հաշվետու ժամանակաշրջան՝ 2019թ երրորդ եռամսյակ

Ծանոթագրություն 1. «Կորպորատիվ տեղեկատվություն»

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ, մշտական գտնվելու և գրանցման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3 և 5, հեռախոս՝ (060) 54-00-00, e-mail: info@silinsurance.am, [URL:www.silinsurance.am](http://www.silinsurance.am):

Ծանոթագրություն 2. «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքեր»

1. Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՍԿ):

2. Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով [բացառությամբ շինությունների, որոնք ներկայացվում են վերագնահատված գումարով]:

3. Ընկերության գործառնական արժույթը դա այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

4. Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարում ներկայացման փոփոխությունների հետ համադրելիությունն ապահովելու նպատակով:

Ծանոթագրություն 3. «Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում»

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

3.1 Ապահովագրության պայմանագրեր

Ապահովագրության պայմանագիր է համարվում այն պայմանագիրը, համաձայն որի կողմերից մեկը (ապահովագրողը) պայմանագրի մյուս կողմից (ապահովադրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադրին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրի վրա:

Պայմանագիրը, որը բավարարում է ապահովագրության պայմանագրի սահմանմանը, մնում է որպես ապահովագրության պայմանագիր մինչ իր ժամկետի վերջը, նույնիսկ եթե ապահովագրության ռիսկը զգալիորեն կրճատվում է այդ ժամանակաշրջանի համար, մինչև բոլոր իրավունքները և պարտականությունները մարվում են, կամ դրանց գործողության ժամկետը լրանում է:

Ճանաչում և չափում

Համախառն ապահովագրավճարներ

Համախառն ապահովագրավճարներն ընդգրկում են պայմանագրով նախատեսված ամբողջ ժամանակաշրջանի համար ընդհանուր ստացվելիք ապահովագրավճարները և ճանաչվում են վկայագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

Չվաստակած ապահովագրավճարների պահուստ

Չվաստակած ապահովագրավճարները տարվա ընթացքում գրանցված ապահովագրավճարների այն մասն են, որոնք վերաբերում են հաշվեկշռի ամսաթվից հետո ռիսկային ժամանակաշրջաններին: Հետագա ժամանակաշրջաններին վերագրվող համամասնությունը հետաձգվում է, որպես չվաստակված ապահովագրավճարների պահուստ:

Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ

Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարները ընդգրկում են պայմանագրով նախատեսված ծածկույթի ամբողջ ժամանակաշրջանի համար ընդհանուր վճարվելիք ապահովագրավճարները և ճանաչվում են վկայագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

Չվաստակած վերաապահովագրավճարները տարվա ընթացքում գրանցված վերաապահովագրավճարների այն մասն են, որոնք վերաբերվում են հաշվեկշռի ամսաթվից հետո ռիսկային ժամանակաշրջաններին: Հետագա ժամանակաշրջաններին վերագրվող համամասնությունը հետաձգվում է, որպես չվաստակված ապահովագրավճարների համախառն պահուստում վերաապահովագրողների մասի փոփոխություն:

Տեղի ունեցած պահանջներ

Տեղի ունեցած պահանջները բաղկացած են ապահովադիրներին վճարված հատուցումներից, ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների գնահատականների փոփոխություններից, կարգավորման ներքին և արտաքին ծախսերից, հանած գույքի փրկումից և սուբրոգացիայից վերականգնումները: Պահանջները ճանաչվում են դրանց ներկայացման պահին:

Տեղի ունեցած պահանջներում վերաապահովագրողների մասը

Վերաապահովագրության պահանջները ճանաչվում են այն ժամանակ, երբ դրանց գծով համախառն ապահովագրական պահանջը ճանաչվում է համապատասխան պայմանագրի պայմանների համաձայն:

Վերաապահովագրության միջնորդավճարից եկամուտ

Ստացված կամ ստացվելիք վերաապահովագրության միջնորդավճարները, որոնք չեն պահանջում ընկերությունից հավելյալ ծառայությունների մատուցում, ընկերության կողմից ճանաչվում են որպես եկամուտ համապատասխան վկայագրերի ուժի մեջ մտնելու կամ վերակնքման պահին: Այնուամենայնիվ, եթե հավանական է, որ ընկերությունից կպահանջվի հետագա ծառայությունների մատուցում, ապա միջնորդավճարը, կամ դրա մի մասը, հետաձգվում է և ճանաչվում որպես եկամուտ այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մատուցվում են ծառայություններ:

Ձեռքբերման ծախսեր

Ընդհանուր ապահովագրության պայմանագրերի ձեռքբերման ծախսերը ճանաչվում են այն ժամանակաշրջանի համար, երբ դրանք տեղի են ունեցել: Ձեռքբերման ծախսերն ընդգրկում են ուղղակի ծախսեր, ինչպիսիք են օրինակ միջնորդավճարները և բժշկական վճարները: Ձեռքբերման ծախսերի մի մասը հետաձգվում է հետագա հաշվապահական ժամանակաշրջանների համար այդ հետագա ժամանակաշրջաններ հետաձգված ապահովագրավճարներին համապատասխանելու

համար: Ձեռքբերման ծախսերի հետաձգումը հաշվարկվում է՝ կիրառելով չվաստակած ապահովագրավճարների և գրանցված ապահովագրավճարների հարաբերակցությունը:

Ապահովագրության պարտավորություններ

Ապահովագրության պարտավորությունները ճանաչվում են այն ժամանակ, երբ պայմանագրերը ուժի մեջ են մտնում և ապահովագրավճարները գանձվում են: Այս պարտավորությունները հայտնի են որպես չկարգավորված պահանջների պահուստ, որը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ տեղի ունեցած, բայց դեռևս չվճարված պահանջների գծով գնահատված վերջնական ծախսումների վրա, անկախ նրանից ներկայացված են, թե՛ ոչ, ինչպես նաև համապատասխան պահանջների գծով կարգավորման ծախսերի վրա, հանած ակնկալվող սուբրոգացիոն և այլ վերականգնումները: Որոշ պահանջների ծանուցման կամ կարգավորման առումով կարող են լինեն հետաձգումներ, հետևաբար այս պահանջների վերջնական արժեքը չի կարող հստակորեն որոշվել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Չվաստակած ապահովագրավճարների պահուստը իրենից ներկայացնում է ապահովագրավճարների այն մասը, որը ակնկալվում է ստացվել հետագա ժամանակաշրջանների ընթացքում: Սովորաբար պահուստը նվազեցվում է պայմանագրի ժամկետի ընթացքում և ճանաչվում է որպես ապահովագրավճարներից եկամուտ:

Վերաապահովագրություն

Ընկերությունը փոխանցում է ապահովագրական ռիսկը իր սովորական գործունեության ընթացքում՝ բոլոր դասերի գծով: Վերաապահովագրության գծով ակտիվները ներկայացնում են վերաապահովագրող ընկերություններից ստացվելիք գումարները:

Վերաապահովագրության գծով ակտիվները վերանայվում են արժեզրկման համար յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կամ ավելի հաճախ, երբ հաշվետու տարվա ընթացքում առաջանում է արժեզրկման հայտանիշ: Արժեզրկումն առաջանում է այն ժամանակ, երբ կա օբյեկտիվ վկայություն, որ վերաապահովագրության գծով ակտիվի ճանաչումից հետո Ընկերությունը կարող է չստանալ բոլոր ստացվելիք գումարները, որոնք պետք է վճարվեն համապատասխան պայմանագրի պայմանների համաձայն և այդ իրադարձությունն ունի արժանահավատորեն չափելի ազդեցություն այն գումարների վրա, որ Ընկերությունը ստանալու է վերաապահովագրողից: Արժեզրկման կորուստը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վերաապահովագրության գծով պարտավորություններ են հանդիսանում վերաապահովագրող ընկերություններին վճարվելիք գումարները: Վճարվելիք գումարները գնահատվում են համապատասխան վերաապահովագրության պայմանագրերի համաձայն:

3.2 Արտարժույթի փոխարկում

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող

բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	30 սեպտեմբեր 2019	31 դեկտեմբեր 2018
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	475.97	483.75
ՀՀ դրամ/1 Եվրո	519.81	553.65

3.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում: Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի անսափվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուղվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

3.4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ընդգրկում են կանխիկ դրամ և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

3.5 Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն օգտագործում է բանկերում տարբեր ժամանակաշրջանների համար բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են իրական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Ընկերության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. դեբիտորական պարտքեր, ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Ընկերության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները:

Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահին:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆինանսական ակտիվներ են ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Ընկերությունը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Ընկերության կողմից իրականացվում է մարման ժամկետին ոչնոտ ակտիվների էական գումարի վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով արժեզրկումից պահուստները:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումներ

աճառքի համար մատչելի ներդրումները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Ընկերությունը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և

որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած շահույթն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում կապիտալում ճանաչված շահույթը կամ վնասը վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ ընկերությունն իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:

3.7 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով ընկերությունն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Ընկերությունը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթից խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Եթե հետագա ժամանակաշրջանում, արժեզրկումից կորուստը նվազում է և այդ նվազեցումը կարող է օբյեկտիվորեն կապվել արժեզրկումի ճանաչումից հետո առաջացող որևէ իրադարձության հետ, ապա նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է: Արժեզրկումից

կորստիորև է հետագա հակադարձում ճանաչվում է ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, այն դեպքում, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է հակադարձման անսաթվով իր հակադարձված արժեքին:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, կապիտալից վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.8 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Ընկերությունը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժիմեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.9 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է սկզբնական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	50	2
Համակարգիչներ և կապի միջոցներ	5	20
Տրանսպորտային միջոցներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	8	12.5
Գույք և գրասենյակային սարքավորումներ	8	12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Հողը և շինությունները արժեզրկվում են կանոնավոր կերպով մոտավորապես 3-5 տարի հետո: Վերազնահատման հաճախականությունը կախված է արժեզրկված ակտիվների իրական արժեքում փոփոխություններից: Այն դեպքում, երբ նշանակալի շեղում կա արժեզրկված ակտիվների իրական արժեքի և նրանց մնացորդային արժեքների միջև, ապա հետագա վերազնահատում է անցկացվում: Վերազնահատումը կատարվում է հիմնական միջոցների ողջ դասի համար:

Վերազնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերազնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերազնահատումից վնասը. այս դեպքում վերազնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերազնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերազնահատումից աճը:

Վերազնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման դեպքում, իրացված հիմնական միջոցների համապատասխան դասի վերազնահատման պահուստում վերագրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին:

3.10 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն: Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված անորոշագիս կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն անորոշագույն են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում: Անորոշագիս հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ: (Համակարգչային ծրագրերի մշակման գծով ծախսերը (օրինակ դիզայն և նոր կամ նորացված ծրագրի թեստավորում) ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվներ, երբ Ընկերությունը կարողանում է ցուցադրել ոչ նյութական ակտիվի ստեղծման տեխնիկական հնարավորությունն այնպես, որ այն հնարավոր լինի վաճառքի կամ օգտագործման, իր մտադրությունը ստեղծելու ոչ նյութական ակտիվ և այն օգտագործելու կամ վաճառելու, իր ունակությունը օգտագործելու կամ վաճառելու ոչ նյութական ակտիվը, այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվը ստեղծելու հնարավոր տնտեսական օգուտներ, աշխատանքներն ավարտելու բավարար միջոցների առկայություն և դրանց հստակ գնահատում: Ծրագրային ապահովման գծով այլ ծախսերը ճանաչվում են դրանց ծագման պահին:

3.11 Ներդրումային գույք

Ընկերությունը սուբրոգացիոն կարգով իր սեփականությանը անցած հողը վերադասակարգել է որպես ներդրումային գույք, որի չափման համար կիրառում է ինքնարժեքի մոդելը: Այն պահվում է հիմնականում գների տատանումներից շահույթ ստանալու նպատակով:

3.12 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունում ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

3.13 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Գնված սեփական բաժնետոմսեր

Երբ Ընկերությունը գնում է Ընկերության բաժնետոմսերը, սեփական կապիտալը նվազեցվում է վճարված գումարի չափով, ներառյալ գործառնությանը բնորոշ բոլոր ծախսերը՝ նվազեցված հարկերով, մինչև գործարքի չեղյալ համարվելը կամ վերաթողարկումը: Երբ գնված բաժնետոմսերը վաճառվում են երրորդ կողմին կամ վերաթողարկվում են, ստացված գումարները ներառվում են կապիտալում: Գնված բաժնետոմսերը հաշվառվում են միջին կշռված արժեքով:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Ծանոթագրություն 4. «Ձուտ ապահովագրավճարներ»

Ապահովագրության դասեր, որոնց գծով ընկերությունը հավաքագրել է ապահովագրավճար	Համախառն ապահովագրավճարներ		Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ	
	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	16 003	11 438	(6 154)	(3 939)
Առողջության ապահովագրություն	174 307	97 429		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	57 595	58 479	(19 797)	(21 835)
Փոխադրվող գույքի բեռների ապահովագրություն	16 335	15 918	(5 092)	(9 119)
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	43 027	41 479	(10 827)	(11 592)
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	514	566	(126)	(115)
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	13 872	3 951	(11 886)	(1 708)
Ֆինանսական վնասների ապահովագրություն	74 301	45 363	(46 865)	(33 579)
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	638 015	596 845		
Աջակցության ապահովագրություն	13 668	10 582		
Ընդամենը	1 047 637	882 050	(100 747)	(81 887)

--	--	--	--	--

Դադարեցված պայմանագրերի գծով վերադարձված գումարներ ըստ դասերի	Դադարեցումից վերադարձված գումարներ		Դադարեցումից վերաապահովագրավճարի վերադարձ	
	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(477)	(310)	129	57
Առողջության ապահովագրություն	(22 455)	(23 758)		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(1 311)	(2 244)	1 691	875
Փոխադրվող գույքի բեռների ապահովագրություն	(4)			
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	(789)	(1 986)	328	1 955
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	(48)		3	
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	(26 165)	(24 451)		
Աջակցության ապահովագրություն	(654)	(238)		
Ֆինանսական վնասների ապահովագրություն	(169)			4 027
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	(712)	(16)	287	11
Ընդամենը	(52 784)	(53 003)	2 438	6 925

	Զուտ ապահովագրավճար		Զուտ վերաապահովագրավճար	
	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Ընդամենը	994 853	829 047	(98 309)	(74 962)

Ծանոթագրություն 5. «Ներդրումային եկամուտ»

Ներդրումային եկամտի աղբյուրը	Ներդրումային եկամտի մեծություն	
	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Ժամկետային ավանդ	48 180	49 114
Պետական պարտատոմս	17 371	20 358
Այլ տոկոսային եկամուտ		
Ընդամենը	65 551	69 472

Ծանոթագրություն 6. «Զուտ հատուցումներ»

Ապահովագրության դասեր, որոնց զծովԸնկերությունը վճարել է հատուցումներ	Համախառն հատուցումներ		Վերաապահովագրողներից ստացված հատուցումներ	
	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(240)	(90)		
Առողջության ապահովագրություն	(354 483)	(274 253)		153
Ցանաքային տրանսպորտի ապահովագրություն	(20 077)	(56 133)	12 966	38 269
Փոխադրվող գույքի բեռների ապահովագրություն	(99)	(834)	79	667
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն				
Ցանաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	(200)	(1 146)		
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	(2 574)	(950)	324	69
Աջակցության ապահովագրություն	(1 712)	(465)		

Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	(438 379)	(432938)		
Ընդամենը	(817 764)	(766 809)	13 369	39 158

	Կարգավորման ծախսեր		Կարգավորման ծախսերում վերաապահովագրողի մասնաբաժինը	
	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Կարգավորման ծախսեր	(2 146)	(3 065)		
Սուբբորոգացիա	18 950	18 572		

	Զուտ հատուցումներ		Զուտ վերապահատուցումներ	
	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Ընդամենը	(800 960)	(751 302)	13 369	39 158

Ծանոթագրություն 7. «Համախառն փոփոխություններ տեխնիկական պահուստներում և տեխնիկական պահուստներում՝ վերաապահովագրողի մասնաբաժնում»

Տեխնիկական պահուստներ	Համախառն փոփոխություններ տեխնիկական պահուստներում		Համախառն փոփոխություններ տեխնիկական պահուստներում՝ վերաապահովագրողի մասնաբաժնում	
	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Չվաստակած ապահովագրավճարների պահուստ	285 881	302 788	29 854	17 449
Ներկայացված , սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ	(71 420)	13 902	13 887	796
Տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստ	(6 092)	(11 563)	(592)	1 356
Ընդամենը	208 369	305 127	43 149	19 601

Ծանոթագրություն. 8 «Այլ գործառնական և վարչական ծախսեր»

Այլ գործառնական և վարչական ծախսի աղբյուր	Այլ գործառնական և վարչական ծախսի մեծությունը	
	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Միջնորդավճարների գծով ծախսեր	(110 570)	(119 445)
Մաշվածություն և ամորտիզացիա	(13 651)	(13 077)
Վարկային կորուստների արժեզրկման ծախս	206	(3 811)
Այլ գործառնական և վարչական ծախսեր	(284 535)	(336 862)
Անձնակազմի գծով ծախսեր	(146 032)	(148 479)
Շենքի տեխնիկական սպասարկման և պահպանման ծախսեր	(46)	(46)
Սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(1 010)	(1 799)
Փոխադրամիջոցների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(7 484)	(8 520)
Գրասենյակային ծախսեր	(2 134)	(1 058)
Անվտանգության ապահովման ծախսեր	(1 563)	(1 437)
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(720)	(480)
Կապի և հաղորդակցության միջոցների գծով ծախսեր	(7 022)	(8 237)
Զփոխհատուցվող հարկեր, տուրքեր	(1 889)	(1 586)
Բանկային ծառայությունների գծով ծախսեր	(4 327)	(3 558)
Այլ կառավարչական ծախսեր	(10 011)	(7 935)
Գովազդի գծով ծախսեր	(2 057)	(23 943)
Անդամավճարների գծով ծախսեր	(8 820)	(1 992)
Հիմնական միջոցների վարձակալության գծով ծախսեր	(34 764)	(59 957)
Բյուրոյի նկատմամբ պարբերական վճարների գծով ծախսեր	(1 878)	(1 557)
Այլ ծախսեր ապահովագրության գծով	(54 778)	(66 278)

Ծանոթագրություն 11 . «Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»

Ընկերության հաշվեկշռում առկա միակ ոչ նյութական ակտիվ ճանաչված համակարգչային ծրագիրը անորոտիզացվում է տասը տարի ժամկետով, գծային մեթոդով:

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Հեղինակային իրավունքներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ոչ նյութական ակտիվ, գծով կապիտալ ներդ.	Ընդամենը	ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեք հաշվետու ժամանակաշրջանի սկզբում
Սկզբնական արժեք	-----	----- --	-----	-----	-----	-----	Կուտակված անորոտիզացիա հաշվետու ժամանակաշրջանի սկզբում
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	25 106					25 106	ճանաչված անորոտիզացիա հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում
Ավելացում	10 800					10 800	Հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում
Օտարում							Հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում
Արժեզրկում							
Վերագնահատում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	35 906					35 906	
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	38 054					38 054	
Ավելացում	9 800					9 800	
Օտարում							
Վերագնահատում*							
Արժեզրկում							
Վերագնահատումից մնացածություն ճշգրտում							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	47 854					47 854	
Կուտակված մնացածություն	-----	-----	-----	-----	-----	-----	
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	14 385					14 385	

Ավելացում	1 122					1 122	
Օտարում							
Արժեզրկում							
Վերագնահատում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	15 507					15 507	
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	18 437					18 437	
Ավելացում	1 575					1 575	
Օտարում							
Վերագնահատմից մաշվածության ճշգրտում							
Արժեզրկում							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	20 012					20 012	
Զուտ հաշվեկշռային արժեք	-----	-----	-----	-----	-----	-----	
Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	27 842					27 842	
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	20 399					20 399	

«Հիմնական միջոցներ»

	Շենքեր	Համակարգչային և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հիմն. միջոց. գծով կապիտալներդ.	Վարձ. հիմն. միջոց. գծով կապիտալներդ.	Ընդամենը
Սկզբնական արժեք	-----	-----	-----	-----	-----	-----	-----
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	445 655	99 300	149 510	120 130			814 595
Ավելացում		1870		261		12 182	14 313
Դուրսգրում	(12 182)	(204)					(12 386)
Օտարում							
Արժեզրկում							
Վերագնահատում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	433 473	100 966	149 510	120 391		12 182	816 522
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	433 473	106 549	149 510	122 988		12 182	824 702
Ավելացում		2 057		1 696			3 753
Դուրսգրում		118					118
Օտարում							
Վերագնահատում *							
Արժեզրկում							
Վերագնահատում ից մաշվածության ճշգրտում							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	433 473	108 488	149 510	124 684		12 182	828 337
Կուտակված մաշվածություն							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	148 045	69 707	63 014	68 870			349 636
Ավելացում	1 945	2 405	4 625	2 898		642	12 515
Դուրսգրում	(642)						(642)
Օտարում							
Արժեզրկում							
Վերագնահատում							
Մնացորդը	149 348	72 112	67 639	71 768		642	361 509

Նախորդ ժամանակաշրջանի վերջին							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	152 935	77 128	76 889	77 646		944	385 542
Ավելացում	1 795	2 576	4 626	2 931		152	12 080
Դորագրում							
Օտարում							
Վերագնահատում ից մաշվածության ճշգրտում							
Արժեզրկում							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	154 730	79 7034	81 515	80 577		1 096	397 622
Չուտ հաշվեկշռային արժեք							
Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	278 743	28 784	67 995	44 107		11 086	430 715
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	284 125	28 854	81 871	48 623		11 538	455 013

Ծանոթագրություն 12. «Ներդրումային գույք»

1. Ընկերությունը ներդրումային գույքի չափման համար կիրառում է ինքնարժեքի մոդելը:

2. 1386 հազար դրամ արժեքով ներդրումային գույք հանդիսացող հողը վարձակալության տրված է, այն պահվում է հիմնականում գների տատանումներից շահույթ ստանալու նպատակով:

3. Հողի հետ կապված գործառնական ծախսեր հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի կատարել:

Ծանոթագրություն 13.. «Ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ և ֆինանսական գործիքների իրական արժեքներ»

Ֆինանսական ակտիվների կատեգորիաներ/ փոխառություններ և դեբիտորական պարտքեր	Հաշվետու ժամանակաշրջան	
	Հաշվեկշռային արժեք	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ/ ժամկետային ավանդներ/	2 123 302	2 109 078
Կանխավճար շահութահարկի գծով	82 399	36 159

Ֆիզիկական անձանց տրամադրված փոխառություններ	100	1 934	
Այլ ակտիվներ , ա/թ	117 904	188 086	
Կանխավճարներ ռեզիդենտ մատակարարներին	43 147	9 213	
Առհաշիվ գումարներ	8		
Հատուցումների գծով կանխավճարային գումարներ	55 949	188 669	
Կանխավճարներ այլ հարկերի և տուրքերի գծով	12 930	8 662	
Այլ դեբիտորական պարտքեր	2 433	3 258	
Այլ ակտիվներ			
Կանխավճարված աշխատաարձ	4 520	2 341	
Այլ ակտիվների գծով հատուկ պահուստ	(1 082)	(24 057)	

Ֆինանսական ակտիվների կատեգորիաներ/ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	
	Հաշվեկշռային արժեք	Հաշվեկշռային արժեք	
Հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	635 269	822 338	
ՀՀ պետական արժեթղթեր	17 442	3 072	
ՀՀ-ում Առևտրային կազմակերպության բաժնետոմսեր	35 000	35 000	
Ընդամենը	687 711	860 410	

Ծանոթագրություն 14. «Վերաապահովագրական ակտիվներ»

Վերաապահովագրական ակտիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	
Զվաստակած ապահովագրավճարների պահուստ	169 319	141 046	
Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ	29 228	6 991	
Տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստ	8 078	9 318	
Ընդամենը	206 625	157 355	

Ծանոթագրություն 15. «Հետաձգված հարկ»

Արձակուրդային պահուստ	- 8 679
Ապագա ժամակահատվածի եկամուտներ	- 957
Այլ ակտիվ	- 10 132
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտավ.	- 4 063
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	- 469
Հարկային վնաս	- 28 754
Հետաձգված ձեռքբերման ծախսեր	- 5 625
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ-----	58 679
Հիմնական միջոցներ	- 11 265
Ֆի նանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	- 4 223
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	- 61
Այլ ապահովագրության պահուստներ	- 7 633
Այլ պահուստներ	- 738
Վաճառքի համար ներդրումներ	- 15 566
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն -----	39 486
Զուտ հետաձգված հարկային ակտիվ -----	19 192

Ծանոթագրություն 16. «Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ»

	Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ	
	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Ապահովադիրներից և միջնորդներից ստանալիք գումարներ	748 160	276 088
Վերաապահովագրողներից ստանալիք գումարներ հատուցումների գծով	34 334	71 915
Վերաապահովագրողներից ստանալիք այլ գումարներ	12	972
Սուբրոզացիայի գծով	56 364	57 736
Ապահ.գծով ստանալիք գումարների հնարավոր կորուստների պահուստ	(29 584)	(34 695)
Ընդամենը	809 286	372 016

Ծանոթագրություն 17. «Ստացվելիք տոկոսներ»

Ծանոթագրություն 18. «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ»

Դրամական միջոցների աղբյուրը	Դրամական միջոցների մեծությունը	
	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Դրամարկղ	1 411	1 076
Բանկային հաշիվներ	129 216	30 498
Ընդամենը	130 627	31 574

Ծանոթագրություն 20. «Ապահովագրական պայմանագրերի հետ կապված պարտավորություններ»

Ապահովագրական պայմանագրերի հետ կապված պարտավորության աղբյուր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Չվաստակած ապահովագրավճարների պահուստ	1 742 846	1 255 621
Պահանջների պահուստ	380 332	273 112
Ընդամենը	2 123 178	1 528 733

Ծանոթագրություն 21. «Կրեդիտորական պարտավորություններ ապահովագրության գծով»

Կրեդիտորական պարտավորություններ ըստ ապահովագրության դասերի/ հատուցումների գծով	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Դժբախտ պատահարների ապահովագրություն		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	200	2 018
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն		
Առողջության ապահովագրություն	61 576	38 992
ԱՊՊԱ պայմանագրերի գծով		730
Փոխադրվող գույքի ապահովագրություն		
Ընդհանուր պատասխանատվություն		
Աջակցության ապահովագրություն	1 419	
Ընդամենը	63 195	41 740

Կրեդիտորական պարտավորություններ ըստ ապահովագրության դասերի/ բրոքերային միջնորդավճարների գծով	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	677	816
Հրդեհից և բնական աղետներից	128	303

ապահովագրություն		
Փոխադրվող գույքի ապահովագրություն	679	240
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	127	156
Ֆինանսական վնասների ապահովագրություն	2 087	
Ընդհանուր պատասխանատվություն	2 399	102
Ընդամենը	6 096	1 617

Կրեդիտորական պարտավորություններ ըստ ապահովագրության դասերի/ դադարեցումների գծով	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	77	24
Փոխադրվող գույքի ապահովագրություն	15	15
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	36	129
ԱՊՊԱ պայմանագրերի գծով	2 106	1 129
Դժբախտ պատահարների ապահովագրություն	90	31
Աջակցության ապահովագրություն	37	
Ընդհանուր պատասխանատվություն	55	
Ֆինանսական վնասների ապահովագրություն	30	
Առողջության ապահովագրություն	2 300	5 356
Ընդամենը	4 746	6 684

Այլ կրեդիտորական պարտավորություններ	461	6 718
--	-----	-------

Կրեդիտորական պարտավորություններ ըստապահովագրության դասերի/ վերաապահովագրավճարների գծով	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	27 767	35 294
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	24 859	26 974
Դժբախտ պատահարների ապահովագրություն	15 255	9 752

Ընդհանուր պատասխանատվություն	22 094	39 118
Ֆինանսական ապահովագրություն	41 389	
Փոխադրվող գույքի ապահովագրություն	12 762	6 748
Ընդամենը	144 126	117 886

Ծանոթագրություն 22. «Այլ պարտավորություններ»

Այլ պարտավորության աղբյուր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Այլ պարտավորություններ, ա/թ	82 646	91 458
Կրեդիտական պարտավորություններ կենսաթոշակային կուտակային վճարների գծով	856	866
Կրեդիտորական պարտավորություններ եկամտային հարկի գծով	15 051	13 348
Կրեդիտորական պարտավորություններ ԱԱՀ գծով		
Կրեդիտորական պարտավորություններ գույքահարկի գծով	261	632
Կրեդիտորական պարտքեր ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով	275	6
Կրեդիտորական պարտավորություններ դրոշմանիշային վճարների գծով	181	198
Կրեդիտորական պարտավորություններ աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	8 571	2 726
Կրեդիտորական պարտքեր արձակուրդային պահուստի գծով	43 397	43 397
Արտաքին կրեդիտորական պարտավորություններ մատակարարների	8 549	24 518
Կրեդիտորական պարտավորություններ Բյուրոյի նկատմամբ պարբերական վճարների գծով	718	980
Հետաձգված եկամուտ միջնորդավճարների գծով	4 787	4 787
Այլ կանխավճարներ		

ապահովագրության գծով		
----------------------	--	--

Ծանոթագրություն 23. «Կապիտալ»

- ա) բաժնետոմսերի հայտարարված քանակ՝ 197.1 հազար հատ
- բ) թողարկված և լրիվ վճարված բաժնետոմսերի քանակը՝ 197.1 հազար հատ
- գ) յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10 հազար դրամ
- դ) Այլ համապարփակ եկամուտ- 2018թ, հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ.
43 879 հազար դրամ – շենքի վերագնահատումից արժեքի աճ, որն արտացոլվել է այլ համապարփակ եկամտում
- 2 466 հազար դրամ - այլ հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ(կապի միջոցներ,գույք և գրասենյակային սարքավորումներ,այլ հիմնական միջոցներ)
- 2.70 333 հազար դրամ – վաճառքի համար մատչելի պարտատոմսերի դրականվերագնահատման պահուստ
- 3.4 867- Ընկերության հիմնադրից ներգրաված ստորադաս փոխառության իրական արժեքի վերաչափումից այլ համապարփակ եկամուտ
- զ) Այլ համապարփակ եկամուտ- 2019թ. հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ.
1.43 009 հազար դրամ – շենքի վերագնահատումից արժեքի աճ, որն արտացոլվել է այլ համապարփակ եկամտում
- 2 2180 - այլ հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ (կապի միջոցներ,գույք և գրասենյակային սարքավորումներ,այլ հիմնական միջոցներ)
- 2.62 265հազար դրամ – վաճառքի համար մատչելի արժեթղթերի դրականվերագնահատման պահուստ
- 3.4 867- Ընկերության հիմնադրից ներգրաված ստորադաս փոխառության իրական արժեքի վերաչափումից այլ համապարփակ եկամուտ

Ծանոթագրություն 24. «Պայմանական պարտավորություններ և ակտիվներ» Ընկերությունը 30.09.19թ.դրությամբունի 382 000 հազար դրամի պայմանական պարտավորություն, որնիրենից ներկայացնում է ապահովագրական գործակալների անփութության հետևանքով առաջացող ապագա հնարավոր ռիսկերը, որոնքԸնկերությունը ստանձնել է համաձայն վերջիններիսհետ կնքված պայմանագրերի:31.12.18թ.դրությամբ նույն ցուցանիշը կազմել է 369 000 հազար դրամ:

Գործադիր տնօրեն՝ Արմինե Մելքոնյան
Գլխավոր հաշվապահ՝ Լիլիթ Յովհաննիսյան